մնում են Վայոց ձորում շինարարական տեխնիկայի ամենահին նմաշ հանդիսացող, մեծամեծ և թեթև կոփված քարերից շարված պարիսպները։

Գյուղամիջի եկեղեցին նոր է, բայց գյուղի փողոցներում և բակերում մեզ հաջողվել է հայտնաբերել մի քանի մեծ, սպիտակավուն քարից շինված հաստ սյուների գեղեցիկ մշակված խարիսխներ։ Դրանցից մեկն էլ բացվեց մեր ներկայությամբ՝ 1954 թ. այժմյան եկեղեցուց ոչ հեռու, շակայի բակը հարթելու ժամանակ։ Մեծաշուք շենքի սյուների այդ մասերն անշուշտ վերաբերում են պատմիչի նկարագրած վկայարանին։

Հին Խոտորալեզի անունը շրջակա վանքերի արձանագրությունների մեջ երբեմն հիշատակվում է Սխտորալէզ և Խոտորալեղ ձևերով։

Գյուղում արձանագրություն ունեցող միակ հուշարձանը մի խաչքար է՝ կանգնած պատվանդանի վրա, գյուղի հարավ-արևելյան կողմում, Արկղանք գետակի ձախ ափին՝ կիսավեր մատուռի մեջ։ Այդ մատուռի շուրջը հնում եղել են գյուղի ավերակներ[1], այժմ բոլորովին հարթված և արտերի են վերածված։

**295. ԽԱՉՔԱՐ,** կանգնած է պատվանդանի վրա. գտնվում է գյուղից հարավ դաշտի միջին, գետակի ափից քիչ բարձր, տակին 3 տող.

| | |
|---|---|
| ........—ՆԱ̅Յ ԿԱԿՆԵՅ | ԿԱՄԱՒՆ ԱՃ̅. ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ |
| ԱՒԽԱՆ‿Ս ԱՅՍ ՊՌՈՂՈՅ | ԱՅՍ ՊՌՈՇՈՑ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ. |
| ԵՒԶԱՒԱԿԱՅ ԻՒՐՈՅԻԹՎ.... | Ի Թ̅Վ. . . . . |

Ծանոթ. Կանգնեցված է Գոշի կենդանության օրոք, 1284 թ. առաջ։

Խաչքարի վրա հետագայում անտաշ քարերից շինվել է ցեխապատ մի մատուռ, որի պատերն են այժմ մնում։ Ամբողջ խաչքարը մամապատ է ու սևացած. ան շերտ-շերտ փշրվում է։

**296. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** գտնվում է գյուղամիջի եկեղեցու բակում. վրան 2 տող.

| | |
|---|---|
| ԵՍՆԻԿԻՂՈՍԿԱ̅ՅԻ ԽԱՉՍ | ԵՍ ՆԻԿԻՂՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ |
| ՏՐՈՍԻՆԵՏՈԳՈՅԻՄ ՈՅԹ̅Վ·ՌԻԴ | ՄԱՐՏՐՈՍԻՆ ԵՒ ՀՈԳՈՑ ԻՄՈՑ. |
| | Թ̅Վ. :ՌԻԴ: (1575): |

Ծանոթ. Բերված է հավանաբար Երթիչ գյուղից։

Լուսանկ. 117

**297. ԽԱՉՔԱՐ,** գտնվում է գյուղից հեռու «Աքանա» կոչվող հանդում՝ շրջանակներին.

| | |
|---|---|
| Ա̅ԾՈՂՈՐՄԷ ԵԼՈՑԱՅՀՈ | Ա̅Ծ. ՈՂՈՐՄԷ ԵԼՈՑԱՑ ՀՈԳՈՑՆ ՈՐ . . . . . |
| ԳՈՅՆՈՐԿԱՀ''Դ | |

Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։

## 21. ԱՂԱՑԱՁ ԳՅՈՒՂ

Պատմական Եղեգիք կամ Եղեգիս ավանն է սա. վերջին դարերում ադրբեջանցի բնակիչների լեզվով ձևափոխվել է Ալայազի։

Եղեգիսը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է և IX դարից սկսած սյունյաց Գահարերեց իշխանների նստոցը։ Ունեցել է ամուր և ընդարձակ բերդ՝ տեղավորված ավանի հյուսիսում ձգված բարձր և երկարավուն բլրաշարի վրա, որի սրբատաշ քարերով շինված պարիսպներն ու դարպասը մինչև այժմ էլ կանգուն են։ Տեղացիներն այդ բերդն անվանում են

[1] Լալայան, Ազգ. հանդ., XII, էջ 272,

«Սմբատա բերդ»։ Այդ ամուր բերդը գրավել չի կարողացել արաբացի զորավար Նըսրն անգամ։ Եղեգիսը գրավոր աղբյուրներում հիշատակվում է որպես գյուղաքաղաք և նույնիսկ մայրաքաղաք։

Հին ավանի ավերակները տարածվում են Եղեգիսի աջ ափով, 3—4 կիլոմետր երկարությամբ՝ նեղ ձորի մեջ։ Այդ ավանի հնէլական ավերակները շինված են եղել մեծ քարերի բեկորներով. որոշակի երևում են տների, բակերի, ձիթհանների և այլն, շատ պարզ մնացորդները։

Եղեգիսի ծաղկման երկրորդ շրջանը զուգադիպել է XIII դարին, Օրբելյանների տիրապետության շրջանին։ Այս ժամանակ ևս Եղեգիսը մնացել է որպես իշխանական նստոց, ուր կառուցվել են տներ, եկեղեցիներ, բազմաթիվ որմնափակ խաչքար-հուշարձաններ և այլն, որոնք տեղավորված են եղել ավանի գերազանցապես արևելյան մասում, ձորի ամենալայն տեղում։ Այդտեղ, հին ավերակների վրա տեղավորված է ներկայիս գյուղը։

Ալայաղ գյուղի ընդարձակ ավերակների մեջ և շրջակայքում գտնվում են մեծ թվով հուշարձաններ՝ արձանագրություններով և նրանց բեկորներով, որոնք մեծ մասամբ վերաբերում են ավանի ծաղկման երկրորդ շրջանին՝ XIII և հետագա դարերին։ Հարմարության համար հուշարձանները բաժանել ենք հետևյալ խմբերի.

1. «Զորաց» տաճարի խումբ, գտնվում է գյուղի արևելյան եզրին։ Այստեղ կանգնած է ճարտարապետական տեսակետից մի անսովոր եկեղեցի, որն ունի միայն արևելյան, բեմի մաս և կողքերին երկու-երկու ավանդատներ։ Այդ բեմը ևս ունի անսովոր լայն բացվածք՝ երկու սյուներով բաժանված երեք մասի։ Բեմի դիմաց այժմ գտնվում են քառակուսի շինության մնացորդները՝ անտաշ քարերով։ Ենթադրվում է, որ հնում ևս մի այդպիսի շինություն է եղել նույն տեղում, բայց այդ նորը և հինը օրգանապես կցված չեն եղել բեմի մասի հետ, որովհետև վերջինս շինված է մաքուր սրբատաշ քարերով և բոլոր կողմերից պահպանված պատերը միանգամայն ինքնուրույն են և միացած չեն եղել այլ շենքի հետ։ Ավելին, արևմտյան պատի ամենավերին մասում (որը պիտի ծածկված լիներ ժողովրդարանով, եթե այդպիսին լիներ) ագուցված են շինության ժամանակ տեղավորված երկու որմնախաչեր, հավանաբար վարպետների հիշատակագրություններով։

Այս հանգամանքները նկատի ունենալով ուսումնասիրությունների մեջ եկեղեցին կոչվել է «Զորաց տաճար», որտեղ պաշտամունքի համար շինվել է բեմը, իսկ զորքը կանգնում էր բաց երկնքի տակ։

«Զորաց» տաճարի պատերի վրա քիչ արձանագրություններ կան, որոնցից կարևորները խիստ հողմնահարված և մաշված են։ Դրանցից երկուսը տեղավորված են արևելյան պատի երկու խորշերի պսակներին, որոնք մաշվածության և տեղի բարձրության պատճառով սխալ են վերծանվել և սխալ թվագրվել։

Նկատենք անմիջապես, որ դրանք գրող գրիչը եղել է մեծ ճաշակի տեր, հաշվի է առել նրանց տեղադրությունը և տողերն ու գրի ձևերը ծառայեցրել է և՛ որպես արձանագրություն և որպես զարդ։ Այդ արձանագրություններից մեկը շինարարական է. հրատարակիչները նրա ամբողջական մասերի մեջ տեսնելով Ստեփանոս ու Տարսայիճ անունները՝ համարել են, որ Ստեփանոսը պատմագիրն է՝ Տարսայիճի որդին, հետևաբար և շենքի կառուցողը։ Մեր վերծանումը ցույց է տալիս, որ Ստեփանոսը Ջալալի որդին է և Տարսայիճի թոռը։ Այս Ստեփանոսը սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրվել XIV դարի 20-ական թվականներին, արձանագրությունների մեջ հիշատակվում է մինչև 1331 թ., իսկ նրան հաջորդած Սարգիսը, նույնպես Օրբելյան, հիշված է 1337 թ. սկսած։ Այս բոլորն ապացուցում են, որ «Զորաց» տաճարը 2—3 տասնյակ տարի ավելի ուշ է շինված, քան ընդունված է, և նրա շինողը պատմագիրը չէ։

«Զորաց» տաճարը շրջափակված է եղել պարսպով, որի ընդարձակ բակում կան արձանագրություններ ունեցող բազմաթիվ տապանաքարեր։ Դրանցից կարևոր են առանձնապես երկու քառակող կոթողների պատվանդանները, որոնք թե՛ ձևով թե՛ արձանագրություններով Եղեգիսի ավերակների մեջ հայտնաբերված հնագույն հուշարձաններն են։ Ինչպես հայտնի է, նման հուշարձաններ կանգնեցվել են Հայաստանում IV—VII դարերում. դրանց խորանարդաձև պատվանդանների վրա քանդակվում էին սյուժետավոր սրբապատկերներ, մարդիկ, կեն-

դանիններ և հավասարաթև խաչեր, բայց ոչ արձանագրություններ: Հայտնի է նաև, որ պատմական Հայաստանի ծայրամասերում և լեռնային շրջաններում նման հուշարձաններ կանգնեցվել են նաև հետագա դարերում՝ թվով քիչ և ձևերի որոշ տարբերություններով։ Եղեգիսում գտնվածները թեև իրենց վրա ունեն հավասարաթև խաչեր, բայց սովորականից ավելի երկարավուն են։ Այս հուշարձանները Եղեգիսում պետք է որ կանգնեցված լինեն նախքան խաչքարեր կանգնեցնելու սովորության հաստատումը կամ դրանց սկզբնական շրջանում՝ IX—X դարերում, մանավանդ որ դրանցից մեկի վրա եղած արձանագրության գրերի ոճը ևս հատուկ է այդ շրջանին (արձ. № 298)։

2. Ս. Աստվածածնի խումբ, եկեղեցին գտնվում է ներկա գյուղի արևմտյան եզրին. թաղածածկ շենք է, բազիլիկ տիպի, չորս մույթերով։ Վերակառուցված է հին ավերակների վրա՝ 1703 թ. և վերջին հայ բնակիչների աղոթարանն է եղել։ Պատերի մեջ օգտագործված են հին ժամանակներին պատկանող խաչքարեր և տապանաքարեր։ Դրանցից մի քանիսն ունեն արձանագրություններ, բայց ավելի հին մի արձանագրություն գտնվելիս է եղել սեղանի ճակատին, որն այժմ բոլորովին անվերծանելի է, սակայն Ջալալյանի ժամանակ նրա մեջ կարդացվել են Սմբատ, Աշոտ և Շահնշահ անունները, որոնք անշուշտ Բագրատունի թագավորներն են (արձ. № 312)

Այս եկեղեցու շուրջը ևս եղել են գերեզմանաքարեր և խաչքարեր, որոնցից մի որմնափակի մասերը տեղումն են՝ արձանագրության մնացորդներով։

3. Գմբեթավոր եկեղեցու խումբ, կանգնած է գյուղի հարավային եզրին. ամբողջ է. պատերին չունի ոչ մի արձանագրություն (չհաշված հարավային պատի վրա եղած արևի ժամացույցի ժամերը ցույց տվող տառանշանները)։ Բակում պահպանվել են արձանագրված տապանաքարեր։ Այս եկեղեցուց 20—30 մետր հեռու գտնվելիս է եղել Տարսայիճի դարբասի մատքի ճակատաքարը (արձ. № 338), իսկ վերջինիս մոտ է «Նահատակի գերեզմանը» (արձ. № 345)։

4. Օրբելյանների տոհմական տապանատուն, գտնվում է գյուղի արևմտյան եզրին, խճուղու կողքին. մնացել են փոքրիկ շենքի մնացորդները միայն. արևելյան մասում կանգնած է եղել որմնափակ զույգ խաչքարերով հուշարձան, որի բեկորների մի մասը տեղումն է։ Տապանատան ներսում մնում են մի քանի գերեզմանաքարեր, որոնցից մեկը, Սմբատի անունով, 1280 թվականի։

5. Առանձնակի կանգնած հուշարձաններ. գյուղի բոլոր մասերում ցրված են խաչքարեր, տապանաքարեր և, որ շատ բնորոշ է այս տեղի համար, որմնափակ խաչքարեր, որոնցից մեկն է գրեթե ամբողջական մնացել։ Այս խաչքարերը ճարտարապետական բարձրարվեստ գործեր են, շքեղ զարդաքանդակներով և պատկերաքանդակների նմուշներով։ Որմնափակի ներսում դրվում են մեկ կամ զույգ խաչքարեր, վերևում մեծ և միակտուր կամարակալ քար՝ սրբապատկերներով, ապա պսակված ճակտոնով։ Ինչպես քանդակները, այնպես էլ շատ գեղագիր արձանագրությունները խիստ բնորոշ են և տեղական հատուկ դպրոցի արտահայտություն։ Բոլոր հուշարձանները վերաբերում են XIII—XIV դդ. կեսերին։

Գյուղի կենտրոնում կա նաև մի փոքրիկ թաղածածկ եկեղեցու ավերակ, որի բակում եղած տապանաքարն ունեցել է արձանագրություն. այժմ այն մնացել է փլատակների տակ։

6. Գյոլում Բուլաղի վանք, գտնվում է գյուղից մոտ չորս կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, լեռնային գոգավորության մեջ գտնվող բլրի տափակ գագաթին։ Եկեղեցին բոլորովին ավերված է. պատերից թափված բեկորների վրա կան արձանագրության մասեր, միակ արձանագրության մեջ եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին. շրջապատում կան խցերի և գերեզմանատան մնացորդներ և մի խաչքար՝ 1251 թ.։ Հավանաբար սա Վայոց ձորի «վերին Նորավանք» կոչված վանքն է։

Եղեգիս ավանի ծաղկման շրջանում նրա սահմաններն ընդգրկել են ոչ միայն Սմբատաբերդը, այլև Ցախաց քարի վանքը։

Եղեգիսի սահմաններից այս ժողովածուում ամփոփված են 48 արձանագրություններ. հնագույնը X դարի և նորը՝ 1703 թ.։ 26 արձանագրություն հրատարակվում են առաջին անգամ։

**298.** ***ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ***, *գտնվում է «Ձորաց տաճարի» բակի արևելյան մասում. խաչի թևերի տակ. 2 տող.*



Ծանոթ. *Արձանագրության սկիզբը մյուս երեսին է եղել, որն այժմ բոլորովին ջարդված է, այս մասը թերևս կարելի է վերծանել . . . . ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒ ՅԻՇԵՑԵ[Ք]։*

*Քառակող նման կոթողները՝ հավասարաթև խաչով պատվանդանի վրա՝ կանգնեցվում էին գերազանցապես մինչև VII դարը։ Դրանից հետո շինվածները միայն երկրի ծայրամասերում են հանդիպում, այն էլ բավական ձևափոխված։ Նկատի ունենալով ձեն ու քանդակները, ինչպես և գրչության ոճը, այս համարում ենք Եղեգիսում հայտնաբերված հուշարձանի և արձանագրության հնագույն նմուշ։*

Լուսանկ. 118

**299.** ***ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ***, *գտնվում է «Ձորաց տաճարի» բակի արևելյան մասում.*



ՏՐ.ԻՄ ԱԾ.| ԱՒԳՆԵԱՑ . . .

Լուսանկ. 119

**300.** ***ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ***, *գտնվում է Նախորդների մոտ, մի երեսին, 6 տող.*



. . . . . . . . . . . . . . .

ԵՒ ԳԻՈՐԳ . . . . . .

ԵՐ ԱՒԳՆԱ . . . .

ԵՒ ԲԱՐԵՃՄԱՒՍ . . .

ԾԱՌԱՒ՛Ն Ք՛

II ՍՈՂՈՄՈՆԻ.

Ծանոթ. *Տարբեր գրչությամբ, բայց ժամանակակից նախորդին։*

Լուսանկ. 120

**301. «ԶՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *արևելյան պատի հյուսիսային խորշի կիսաշրջան պսակի հարթ և թեք մակերեսներին, արտաքուստ, 2 տող.*



ԵՍ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍ, ՈՐԴԻ ՋԱԼԱԼԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻ ՏԱՐՍԱԻՃԻՆ ՀԻՄՆԱՐԿԵԼ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱ-ՆՈ[Ւ]Ն ՍՐԲՈՒՀՈՑ ԱԾԱԾ-ՆԱՑ . . . . . . . . . . :

Ծանոթ. *Առաջին տողը գրված է թեք մակերեսին, որա տակ, հարթ մակերեսի վրա երկրորդ տողն է՝ բոլորովին եղծված. արձանագրությունը շատ բարձր է և խառն գրչությամբ. գյուղում համապատասխան սանդուղք չգտնվեց, թերևս մոտիկից հնարավոր լիներ երկրորդ տողի սկզբի և վերջի, համեմատաբար լավ պահպանված մասերից որոշ բան պարզել։*

*Արձանագրության վերծանողների սխալմունքի պատճառով այս հուշարձանի կառուցողը համարվել է պատմագիր Ստ. Օրբելյանը, հետևաբար և ժամանակն անճիշտ։ Հիշատակված տեր Ստեփանոսը պատմագրի անհամամայր եղբոր, Ջալալի որդին է. հետևաբար շինության ժամանակն էլ պետք է համարել 2—3 տասնամյակ հետո։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 444։ Ալիշան, 148։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 65։*

Լուսանկ. 121

**302. «ԶՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *արևելյան պատի հարավային խորշի կիսաշրջան պսակի հարթ և թեք մակերեսներին.*



. . . ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՆՎԻՐԱՆԻ ՈՒՂԵՐՁ ՄԵԾԻ ԷԼԻԿՈՒՄԻ, ԲԻՐԹԵԼ ԱՆՈՒՆ ՔԱՋ . . .

Ծանոթ. *Տակի հարթ մակերեսին եղածները բոլորովին ջնջվել են։*

Լուսանկ. 122



**303. «ԶՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *արևելյան պատի կենտրոնի նեղ լուսամուտի շուրջը.*

ՏՐ. ԱԾ. ՅՍ. ՔՍ. ԱՒԳՆԷ ԲԻՐԹԵԼԻՆ, ԲՂՇՔԷՆԻՆ ԵՒ ԻՎԱՆԷԻ:

Ծանոթ. *Հիշատակված անձերը Էլիկում Օրբելյանի որդիներն են (XIV դարի առաջին կեսի)։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 444։ Ալիշան, 148։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 65։*

Լուսանկ. 123

**304. «ՋՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *հյուսիսային խորանի և բեմի արանքի միջնապատի ստորին մասում, արտաքուստ, 4 տող.*




. . . ՍԻՄԵՈՆ ՅԻՇ[ԵՑԷՔ] · ԹՎ. :ՉՀԷ: (1328):
. . . [ՅԻՇԵՑ]ԷՔ ՔՍ. . . ՅԻՑ.

Ծանոթ. *Այս թվականը ապացույց է, որ եկեղեցին 1228 թ. շինված էր վաղուց։*

**305. «ՋՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *հյուսիսային խորանի արևմտյան մուտքի հարավային կողին, երեսով հյուսիս, 7 տող.*



ԹՎԻՍ :ՉԴԷ: (1348) [ԵՍ ԲԱԽՏԻԱՐ[Ի ՈՐԴԻ
ՍԱՐ[ԳՍԻ] [Խ[Ա]]ՆՍ ՏՎԱՔ ԱՅ[Ի]ԳԻՆ ՄԵՐ]
ՎԱՆՈՒՑ, ՈՎ ՈՐ ԽԱՓ[Ա]Ն[Ի] ԳԱՏԻ ՑԱՑ.
ԻՐ ՍՐԲՈՑ:

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 444, միայն թվականը՝ այն էլ սխալ—ՌՂԲ։*

**306. «ՋՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *բեմի արևմտյան պատի վերևի մասում, շինության ժամանակ ագուցված որմնախաչի վրա. արտաքուստ.*



ՔՍ. Ս[Ո]Ղ[Ո]ՐՄԻ ԻԳՆԱ[Տ]ԻՈՍԻ, ԱՄԷՆ:

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 444։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 65։*



**307. «ՋՈՐԱՑ ՏԱՃԱՐԻ»** *բեմի արևմտյան պատի վերևի մասում, շինության ժամանակ ագուցված որմնախաչի վրա. արտաքուստ.*

ԱԾ.[ ՈՂ[ՈՐՄԻ ԳՐԳՈՐԱՑ ԵՒ Ծ[ՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ:

Ծանոթ. *Այս և նախորդ հիշատակագրությունը վերաբերում է շինարար վարպետներին կամ շինության նյութապես օժանդակած անձնավորություններին։*

**308. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ և մեծ. թաղված է գետնի մեջ ամբողջովին, «Ջորաց տաճարի» արևելյան պատի տակ. երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ՇԱՀԻՆ[
ԹՎ. :ՉՀԸ: (1329):

Լուսանկ. 124

**309. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ և մեծ, թաղված է գետնի մեջ ամբողջովին, «Զորաց Տաճարի» արևելյան պատի տակ. երեսին 3 տող.*




Ի ԹՎ. :ՉՁԲ: (1333)| ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽՈՇԻՆ, ԴՈՒՍ,ՏՐ ԴՈՓԵՆՑ ՎԱՐՀԱՄԻՆ:

*Հրատ. Ջալալեանց, 152, Ալիշան, Սիսական, 148, Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 65,*

**310. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ և մեծ, թաղված է գետնի մեջ ամբողջովին, «Զորաց տաճարի» արևելյան պատի տակ. երեսին 3 տող.*




ԹՎ. :ՉՂՋ: (1347)| ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ՎԱԽԹԱՆԳԻՆ, ՈՐԴԻՈՅ ՊԱՐՈՆ ՈՒՄԷԿԻՆ:

*Հրատ. Ջալալեանց, 152, Ալիշան, 149, Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 66,*
Լուսանկ. 12ւ

**311. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ և մեծ, թաղված է գետնի մեջ ամբողջովին, «Զորաց տաճարի» բակի արևմտյան մասում, գավթի մուտքի մոտ.*




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՌՋՈ,ԹԱՆԻՆ ԴՈՒՍՏ,Ր, ՇԱ,Վ,ԻՆ,. ԹՎ. :ՉՂԷ: (1348):

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԽՈՒՄԲ

**312. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *բեմի բարձրության շրթունքին 1 տող.*

· · · Սմբատ · · · որդի · · · Աշոտ · · · Շահնշահ · · · :

Ծանոթ. *Այս արձանագրությունն այժմ բոլորովին ջարդոտված է. անձնանունները մատնանշում են Բագրատունիներին (X—XI դդ.)։*

*Հրատ. Ջալալեանց, 153, Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ Է, 436,*

**313. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, կանգնած է ս. Աստվածածնի հարավային պատի տակ. եղել է ուղղանկյուն, որի ճակատի մի բեկորն ընկած է կողքին, վրան մեկ տող թերի արձանագրությամբ.*



· · · ՈՒ ՍՍՈՒՍՆՈՑ ԵՒ ՋԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ . . . :

Ծանոթ. *Մեծ և գեղեցիկ տառերով է, հատուկ այս տեղի լավագույն գրչությանը (XIII դ.)։*

**314. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հարավային պատի արևմտյան անկյունի մոտ, արտաքուստ ագուցված տափակ տապանաքարի երեսին, 4 տող.*




ԹՎ. :ՉՂԴ: (1345) ԱՅՍ Է ԴԻՐ| ՀԱՆԳՍՏ|Ե,Ա,Ն ՇԱՏԷՐ,ԻՆ,:

Լուսանկ. 126

*315. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ արևմտյան մուտքի մոտ, պատի մեջ ագուցված խաչքարի թևերի շուրջը, միայն թվականը.*



ԹՎ. :ՋՂԴ: (1545):



*316. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ հարավային մուտքի մոտ, պատի մեջ ագուցված խաչքարի վրա. 3 տող.*

. . . . . . . .

ՓՐԿՈՒԹԻ
ՀՈԳՈՅ ՀԼԱԻՅՐ
ԻՄ ՄԵԼԻՔՇԻՆ:

Ծանոթ. *Առաջին տողը եղել է ճակատի քիվին, մնացել են աննշան մասեր։*

Լուսանկ. 127

*317. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ արևմտյան մուտքից վեր, մի քարի վրա. 3 տող*



ԵՆԵՂԵՑԻ| ԹՎԻ :ՌՃԾԲ: (1703):

Ծանոթ. *Անարվեստ տառերով և կիսագրագետ գրությամբ:*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 436։*
МАК, *100 (միայն ռուսերեն թարգմանությունը)։*

ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՒՄԲ

*318. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ և տափակ, եկեղեցու արևելյան պատի տակ. երեսին 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ-
[Տ ՈՐ]ԴԻ ԷԳՆԱՏԻ-
ՈՍԻ. ՑԻՇԵՑԷ-
[Ք Ի] ՔՐԻՍՏՈՍ, ԹՎ. :ՉԾԳ: (1304):

**319. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, գտնվում է եկեղեցու հյուսիս-արևելյան անկյունի մոտ, 2 տող.*

ԹՂԿԷԱՅՍԷՏՆ
ԳԻՍՄՂՊԷԼԻՆ

ԹՎ. :ՉԿԷ: (1318) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԴՊԷԼԻՆ:

**320. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, գտնվում է եկեղեցու հարավ-արևելյան անկյունի մոտ. 2 տող.*

ԱՅՍ:ՀԱՆԳԻՍՄՓՈՒԱ
ՆԿՇԱՀԻ:ԹՉ·Հ·Դ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՓՈԱ|ՆԿՇԱՀԻ.
ԹՎ. :ՉՀԴ: (1325):

*Հրատ. Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 66:*

**321. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *մեծ և տափակ. գտնվում է եկեղեցու հարավ-արևելյան կողմում. 5 տող.*

ԱՍԷ
ՀԱԳԻՍՄ
ՍՈԾԱՀԻ
Ն:Ի ԹՎ
:Ն·ՀԸ

Ա|Յ|Ս Է| ՀԱ|Ն|ԳԻՍՏ, ՍՈՃԱՀԻ|Ն. Ի ԹՎ.| :ՆՀԸ: (1029)

**322. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *մեծ և տափակ. գտնվում է եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում, 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄ
ՍՄԵՓԱՆԷՆԻԹՎ·ՆՂԸ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍՏԵՓԱՆԷՆ.
Ի ԹՎ. :ՉՂԸ: (1349)

Ծանոթ. *Գրված է ՍՏԵՓԱՆԷՆ:*

Լուսանկ. 128

**323. ԽԱՉՔԱՐ,** *գտնվել է եկեղեցու արևմուտքում եղած փոքրիկ դավթի ավերակի մեջ. վրան միայն թվականը.*

:ՋԾԴ: (1505):

Ծանոթ. *Այժմ չկան ո՛չ գավիթը և ո՛չ էլ խաչքարը:*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 436:*

*Այստեղ եղել են նաև հետևյալ տապանագրերը, որոնք այժմ չկան:*

**324. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

ԹՎ. :ՋԾԷ: (1508) Այս է հանգիստ Սիմէոնի:

*Հրատ. Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 66:*

**325. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է հանգիստ Շմավոնի:

*Հրատ. Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 66:*

*326. Արևելյան կողմում կանգնած զույգ որմնափակ խաչքարերից թափված բեկորների վրա, որոնք շարված են պատին՝ անկանոն ձևով.*



.Ի ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
ՏԱՐՍԱՅԻՃԻՆ . . . . . . . . .
. . . . ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲ . . .

Լուսանկ. 129

***327. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, վրան երկրաչափական ուռուցիկ զարդերով. կողին և ճակատին 1 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍՄՊԱՏԱ.
ԹՎ. :ՉԻԹ: (1280):

Լուսանկ. *130 (արևելյան ճակատին գտնվող թվականը չի երևում):*

***328. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ**, գտնվել է նախորդի մոտ:*

Ծանոթ. *Այժմ տեղում չէ. վրան եղել է արձանագրություն՝ Հազարգեղի և Հասան պուղի անուններով (1303):*

*Հրատ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, էջ 61:*

***329. ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐԻ** կողին մնացած մի բեկորի վրա, 1 տող.*



. . . . ՀՈՐԱԴԲԱՅՐ ՍՄՊԱՏԱՅ Գ. . . . .

Լուսանկ. 131

***330. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, արևմտյան ճակատին 2 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՆՋԻՍԻՆ

Ծանոթ. *Հավանաբար Նրջիս անվան աղված ձևն է*

***331. ԽԱՉՔԱՐ**, փոքր և հասարակ, գտնվում է տապանատնից արևելք, գերեզմանատան մեջ. ճակատին և տակին 3 տող.*



ԿԱՆԿՆԵՅԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹ ՄԱՐԻՆ.
ԹՎ. :ՋԺԷ: (1468):



8--362

**332. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *գտնվում է նախորդի մոտ.*

ԱՅՍԷՀԱԳՄՄՈՒՐԱԴԻՆ — ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՈՒՐԱԴԻՆ:

### ԱՌԱՆՁՆԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎՐԱ

**333. ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, կանգուն է միայն խաչքարը, իսկ շրջափակող մասերը քանդված են և թափված. գտնվում է գյուղից ½ կիլոմետր արևմուտք, խճուղու եզրին՝ խաչքարի ճակատին, շրջանակների քառակուսի զարդերի մեջ ու մի բեկորի վրա.*




ԹՎԻՍ: ՈՂԶ: (1247) ԵՍ ԳՐ[Ի]ԳՈՐ
ԿԱՆԿ[Ն]ԵՑԻ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՀԱՒՐ
ԻՄՈՅ . . . ԱՐԴ.| . . . ՈՐ ՇԻՆԵՑԻ
ՀՈԳՈՅ ԻՄՈՅ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ . . .

Ծանոթ. *Թափված բեկորները ծածկել են խաչքարի ստորին մասը. բացել չկարողացանք:*

**ԽԱՉՔԱՐԵՐ**, *չորս հատ, մեծ և գեղաքանդակ, կանգնած են գյուղի արևելյան եզրի գերեզմանատան մեջ՝ իրար կողքի, որոնց վրա իրար կցված երեք արձանագրություններ.*



**334.** Ա. ԹՎ. :ՉԲ: (1253) ԵՍ ՄԽԻԹԱՐ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄՈ ԱԲԼԿԱՆՆ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈ ԱՄԻՍԹ:

**335.** Բ. ԵՍ ԱՊԼԻԿ ԳՆԵՑԻ ՉԱՅ|Ս ՀՈՂՍ :ԻԷ: ԴԵԿԱՆ ԱՐԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՍ ՀԱՒՐ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ,



**336.** Գ. ԹՎԻՍ :ՉԲ: (1253) ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՐԳԱՐԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻՒՆ. ՀՈԳՈՅ ԵՒ ԱՄԻՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ.

Ծանոթ. *Խաչքարերը պատկանում են միևնույն գերդաստանին: Առաջին երկուսի տակին գրված է երկու, և հաջորդներին երեք տողով:*

*2-րդ արձանագրության վերջում հրատարակիչները վերծանել են* «աբարի գեխզմանատուն ճայոց» *ձևով է. նախ* գեխզմանը *շատ որոշ է. դրանից հետո մաշվածության պատճառով միայն* ճա., *որը պետք է* ճար *բառի կրճատը լինի. նկատի ունենալով* գեխզմանը *հաջորդակին՝ լրացնում ենք՝* ճար եւ մար խմոյ: XIII *դարում Եղեգիսում ստարազգի բնակչության ոչ մի հետք չկա, հետևաբար* «գեխզմանատուն ճայոց» *արտահայտությունն անիմաստ է:*

Հրատ. *Ջալալեանց, 153: Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 436 (միայն Բ): Ալիշան, 150:* МАК, *102—103 (միայն առաջին թարգմանությունները): Լալայան, Ազգ. Հանդ. XXVI, 65—66:*

Լուսանկ. 132

***337. ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ** (դարպաս) մուտքի բարավոր. ընկած է գյուղի միջով անցնող ճանապարհի մոտ, Մամեդով Խան Աղայի տան բակում, հենած պատին. վրան՝ 5 տող.*



ԱՅՍ ԴՈՒՌՆ ԲԱՑԱՒ ԱՐԵՒԵ|ԼԵԱՆ, ՀՐԱՄԱՆԱՒ ՄԵԾ ԻՇԽԱ|ՆԱՑ ԻՇԽԱՆԻ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԻՒՐ Ե|ՂԲԱՐՑ, ՈՐՔ ՍՏԱՆԷՔ ՅԻՇԵ|ՑԷՔ Ի ՔՍ:

Ծանոթ. *Հիշատակված է Սմբատ «արքան», մահացած՝ 1273 թ., հետևաբար շինությունը կառուցվել է դրանից առաջ:*

Լուսանկ. 133.

***338. ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ** (դարպաս) մուտքի կամարակալ քար. գտնվելիս է եղել ս. Նշան եկեղեցու մոտ, հարավից. վերին շրջանակներին 2 տող.*



Ա͞Ծ ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՆԷ ԴԱՐԱԲԱՍ ԲԱՐՈՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՄԻՆԱՅ| ԽԱԹՈՒՆԻՆ՝ ԻՒՐ ԱՄՈՒՍՆԱՒ|. Թ͞Վ. ՉԻԳ: (1274):

Ծանոթ. *Փարի կենտրոնում Տարսայիճի և Մինա Խաթունի պատկերներն են քանդակված: Փարն այժմ չկա:*

*Հրատ. Ջալալեան, 154։ Քաջբերունի, Արարատ, 1888 թիվ է, 438։ Ալիշան, 151։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 69 (տես նաև լուսանկար. անդ, 68)։*

***339. ՈՐՄՆԱՓԱԿ ԶՈՒՅԳ ԽԱՉՔԱՐԵՐ,*** *մեծ և գեղաքանդակ, շրջափակող բոլոր մասերը քանդված են. կանգուն խաչքարերը կիսով չափ ծածկված են լանջից սահող հող ու քարով. տեղում է գտնվում նաև կիսակամար ճակատաքարը. արձանագրության պահպանված մասերից կարելի է շարահարել՝*



ՔՍ. ԱԾ

ԱԻՐՀՆԵՍԱՒ Է ԱԾ, ԻՒՐ ՄԻԱԾՆԻՆ ՅԱ.
ՔՍ. ԱԾ ԹՎ. Հ[ԱՅՈՑ] :ՉԻԲ: (1273) Ի
ԲԱՐԷՊԱՇՏ ԻՇԽԱՆՈՒԹՆ [Ս]ՍՊԱՏԱՑ
[Ո]ՄՆԵՔ ՍՄ[Բ]ԱՏ, ՍԱՐԳԻ[Ս] ԿԱՆԳՆԵՑԱՔ
ՍԲ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ ՄԵ[Զ]
ԱՄՈՒՍՆՈ[Յ] ՄԵՐՈՑ...

Ծանոթ. *Ա. տողը գրված է խաչքարերի կամարակալ ճակատաքարի վրայի բարձրաքանդակ ֆիգուրների գլուխներից վեր։ Բ. տողը՝ նույն ճակատաքարի ստորին հորիզոնական շրթունքին։ Գ. տողը՝ երկու խաչքարերի ճակատին։ Դ և Ե՝ որմնափակի՝ տեղում մնացած հյուսիսային և հարավային ոտքերի վրա։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 443։ Ալիշան, 152։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 72 (բոլորի մոտ էլ թերի է)։*

***340. ԽԱՉՔԱՐ,*** *մեծ ու պարզ. կանգնած է մի մեծ ժայռաբեկորի վրա գտնվում է գյուղից արևելք, ձորի մեջ. արևմտյան երեսին 10 տող.*



ԹՎ. Հ[ԱՅՈՑ] :ՉԻԸ: (1279) Ի ԲԱ[Ր]ԷՊԱՇՏ
ԻՇԽԱՆՈՒԹԻ. ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՇԻՐ ԵՒ Շ[Ա]ՀԻ
ՈՐԴԻ ԳԻՐԳՈՐ[Ս] ԿԱՆԿՆԵՑԻ Խ[Ա]ՉՍ ԻՆՁ,
ԱՄՈ[Ւ]Ս[Ն]ՈՅ ԻՄՈ, ՁԱԽԱԿԱՑ ԻՄՈՑ.
ԱԾ ՈՂՈՐ[Մ]Ի ՏԻ[Կ]Ո.

Ծանոթ. *Վերջին նախադասությունը և անունը վերաբերում են հավանաբար կազմող վարպետին։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 443։ Ալիշան, 150։*
Լուսանկ. 134

341. ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐ, մեծ և զեղաքանդակ. կանգուն է միայն խաչքարը, շրջափակող մասերը քանդված-թափված են. գտնվում է նախորդից 100 մետր հյուսիս՝ առվի ափին. ճակատին և-թափված երեք բեկորների վրա.

ԵՍԱԷՎԻՍԽԻԹԱՐՐ ԴԻՔ ԽՈՑԱԴԵՂԱ.ՕՈՍ:+

ՄԵՐ ՈՅՅԻՇԵՔՍԱԾ Թ:Չ:Լ:Բ:

Ի ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆՈՒԹԵ. ՏԱՐՍԱՅԻՃԻՆ . . | ԵՍ ԱԻԵՏԻՍ, ՄԽԻԹԱՐ, ՈՐԴԻՔ ԽՈՑԱԴԵՂԱ ՈՍ . . | ՄԵՐՈՑ ՅԻՇԵ ՔՍ. ԱԾ. ԹՎ. ՉԼԲ: (1283):

Հրատ. Ջալալեանց, 155, Ալիշան, 152, Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 72, ՄԱԿ, 105, Լատանէկ. 135

342. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, գտնվել է գյուղամիջի փոքրիկ, թաղածածկ եկեղեցու ավերակների մոտ.

Այս է հանգիստ Տէր Ավագ քահանային. թվ. ՉԼԹ: (1290):

Ծանոթ. Այժմ ծածկված է ավերակներով

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ է, 443, Ալիշան, 150, Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 71, Ջալալեանց, Բ, 152,

343. ԽԱՉՔԱՐ, փոքր. ընկած է գյուղի արևմրտյան ծայրին, խճուղու եզրին. 5 տող.



ՈՔԵՐԿՐՊԱԳԷՔԱԾԱՄՈՒԽՄՆՇԱՆԻՍՋՉԱՔԵՈՍԵՋԾՆՈՂՍՆՄԵՅԻՇ . . .

:ՉԿԲ:| ԹՎ. (1313)| ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԻՔ ԱԾԱՄՈՒ|Խ ՄՔ. ՆՇԱՆԻՍ ՋՉԱՔԵՈՍ| ԵՒ ՋԾՆՈՂՍՆ ՄԵՐ ՅԻՇԵՑԷՔ:

344. ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐ, մեծ և զեղաքանդակ. քանդվել է միայն հարավային շրջանակը, որի բեկորները մասամբ տեղումն են. գտնվում է նախորդների ուղղությամբ, դեպի հարավ, խճուղու հարավային եզրին. շրջանակներին՝ մեկ տող.

ԱՅՍ ԴԱՅԻՍՈՂՆ ԺԻԵԼԱԵԺԲԱ ԾՈՅՆ ՅԻՎԱԿԵՅԱԻՃ ԽՆՈՒԹ . . .



ԱՅՍ ԳԱՑԻՍՈՆ ՄԽԵԼԱՅԼ ԱՐԵԼԱՅՄԲ ԱԻԾԼԵԼՅՈՑՆ ՑԻ, ԿԱՆԿՆԵՑԱՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԼԱՅՄԲ ՊԱՐՈՆ ԲԻՐԹԵԼԻՆ. ՄԵՔ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԽԻԹԱՐ . . . Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ ՄԵՋ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ԹՎԻՆ :ՉՂԹ: (1340) ՄԱՐԻԱՄ, ՅՈՀԱՆՆԷՍ:

Մանր. *Տեղում մնացել են գծագրված մասերը, մնացածը լրացնում ենք ըստ նախկին հրատարակիչների:*

*Խաչքարի գլխի կամարակալ քարի վրա երեք բարձրաքանդակ ֆիգուրներ՝ կենտրոնում Հիսուս և կողքերին Մարիամ ա. Հովհաննես, որոնց տակին իրենց անունները:*

*Հրատ. Ջալալեանց, 155, Ալիշան, 152, Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 73,*
Լուսանկ. 136

***345. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, մեծ. երեսին ագուցված են երեք մարմարե սալեր, որոնց վրա կան հայերեն և արաբատառ արձանագրություններ. արաբատառը շատ եղծված է, հայերենը՝ մասամբ. 12 տող.*




ԱՅՍ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԾԱՌԱՅ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԵ . . . ԵՒ ԻՒՐ ԱՐԵԱՄԲՆ ՆԵՐԿԵԱԼ ԵՒ . . . *ԾԵԳԱՆԱՒՈՐԹԱ* ՎԱՍՆ ԱՆՈՒԱՆՆ ՔԻ. *ՄԵԹԱՂՈՒԱՆԿ* ՃՐԱԳԱՎ . . . *ՐԵԱՄ* ՄԷՐԾ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ ՑԵՂԵԳԻՍ: ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՈՎ ԵՒ ՈՒՂԵՂ ՍՐՏԻՒ ԵՒ ԼԻ ՇՆՈՐՀԱՒՔ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ ԵՒ ՔԻ. ԼՈՒՍՈՑՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՒ. ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ

ՔԻ. ՈՂՈՐՄՈՒԹԵ. ՀԱՍԱՒ *ԹԱՎԼԱՎԱԼԻՍ* ԱՄԵՆԱՑՆ ՑԱՒՈՑ ԲԺԻՇԿ ՅԱՂԱՒԹՍ ՑԻՇԵՑԷՔ ԵՂԲԱՐՔ ՄԵՐ տէր Ներսէս . . . վասն անուանն Քրիստոսի: Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ :ՊԱ: (1352) ԵՂԵՒ:

Մանր. *Այս գծագիրն տալիս ենք Հ. Փափազյանից: Սերը կարդացել ենք:*

*Որոշ տառախմբեր մնում են անհասկանալի. Նախավերջին, փոքրատառերով շարված տողը կա հրատարակիչների մոտ. վերջին թվական անեղծ տողը գրված է քարի արևելյան ճակատին:*

*Դեռևս հին հրատարակիչների ժամանակ արձանագրությունը քայքայված է եղել, որի հետևանքով միայն վերջին մասերն են վերծանվել:*

*Գտնվում է ս. Նշան եկեղեցու բակի հարավային մասում. վրան շինված է եղել մատուռ, որի հիմնապատերն են երևում այժմ. տեղացիները կոչում են «նահատակի գերեզման»:*

*Հրատ. Ջալալեանց, 154, Քաջբերունի, «Արարատ», 1888, է, 437, Ալիշան, 151, Լալաեան, XXVI, 67*

**346.** ***Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին, երկու քարերի վրա, արտաքուստ, 7 տող.***



ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԱՅՍ ԻՄ ԳԻՐ| Է ԽՈՒԵՆԱ, ՈՐ ՏՎԻ ՁԻՄ| ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱԾԱԾՆԻՍ, ՈՒԹ|ԱՒՐԷՔՆ ՅԱՅՏ-ՆՈՒԹԵ. ԺԱՄՆ| ԴԱՒԹԻ. ՎԱՐԴԷ-˻ՎԱՌՆ˼՝ ՄԱՒՐՆ ԱՐԵՒ|ՇԱՏԻՆ, ԱՍԱԴԻԱ, ՇՆԱՀԱՒՈՐ|ԻՆ, ԽՈՒԵՆԱ.

Ծանոթ. *Արձանագրությունը վերագրում ենք XIII դարի վերջերին։*

*Եկեղեցու պատերի, փլած քարերի, ինչպես և մի քանի խաչքարերի վրայից հավաքել ենք մոտավորապես 10 ուրիշ արձանագրություններ ևս (մեծ մասը բեկորներ), բայց դժբախտաբար կորցրել ենք. մեկի լուսանկարն է մնացել միայն։*

Լուսանկ. 137

**347.** ***Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ պատից ընկած մի քարի վրա. 5 տող.***



ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ՄԽ|ԻԹԱՐ ՍԱՀՄ|ԱՆԵՑԻ ՏԱՐԵՆ| . . . Ի ՏԱՒՆԻ ՅԱ˻Յ˼Տ˻Ն˼|ՈՒԹԵ :Ա: ԺԱՄ . . .

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**348.** ***Մի ԱՅԼ ՔԱՐԻ ՎՐԱ, 3 տող.***



. . . . ԺԱՄ . . . . ՄԱՒՐՆ| ՏԻՐԱՆՑԻՆ

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից.*

**349.** ***Մի ԱՅԼ ՔԱՐԻ ՎՐԱ. 3 տող.***



. . . . ՈԽՄՆ . . . . ՆՆՋԵՑ|ԵԼՈՑ˺

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**350.** ***Մի ԱՅԼ ՔԱՐԻ ՎՐԱ, 3 տող.***



. . . ˹ԵԿԵ˺ՂԵՑԻՍ| . . . . ԱՒՐՆ . . . .

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**351. ՄԻ ԱՅԼ ՔԱՐԻ ՎՐԱ, 3 տող.**

ՐԳՍԻՄԱԻ
ԱՄՆ ՍԱՐԳՍ
ԽԱՓԱ Ն

ՍՔ, ՍԱ[Ր]ԳՍԻ ՏԱ[Ր]ՆԻՆ [ԽԱ]ՄՆ ՍԱՐԳՍ[Ա]Ի ԱՆԽԱՓԱՆ...

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**352. ԽԱՉՔԱՐ**, *վերին մասը կոտրված, ընկած է ս. Աստվածածնի մոտ, շրջանակներին և տակին.*

ԽԱ
ԱՍ
ՀԱ
ՍԱ
ԻՍ
Է·
Ն·
ՐԳ
ԴԱ
ԻԻԹՈՐԴԻՔ ՊԱՊԱԾԱ
ՐԻՆՈՒԱՂԵԿԻՆ

. . ԽԱ[Չ]Ս . . . ՀԱՍԱՆ, ԴԱԻԻԹ ՈՐԴԻՔ ՊԱՊԱԾԱՅՐԻՆ ՍԻ ԱՂԵԿԻՆ։

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**353. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ**, *ստորին մասում միայն թվականը.*

ԹՎՋԾԲ

ԹՎ. ՋԾԲ։ (1503)։

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

## 22. ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔ

*Գտնվում է համանուն պատմական գյուղում (մոտիկ անցյալում կոչվում էր Ալթասի, այժմ՝ Ղզլգյուղ)։*

*Հնում Արատեսը եղել է վանքին կից մի փոքրիկ գյուղ, ընդամենը 6 չափ հարկով։*

*Վանքը բաղկացած է իրար կից 4 մեծ և 5 փոքր շենքերից, դրանցից 3-ը կանգնած են նույն ուղղության վրա՝ հյուսիսից հարավ, իսկ մեկը կից է դրանց արևմուտքից։*

*Վանքի եկեղեցիներն արձանագրությունների մեջ կոչված են ս. Սիոն, ս. Կարապետ և ս. Աստվածածին, բայց այժմ հնարավոր չէ ճշտորեն որոշել, թե անուններից որը որ շենքին է վերաբերում։ Շինարարական արձանագրությունների բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել նաև շենքերի ճիշտ թվականը։*

*Վանքի շինությունն սկսվել է հյուսիսից. կենտրոնում մի թաղածածկ եկեղեցի է, որին հյուսիսից կցվել են երկու և հարավից՝ երեք մատուռներ։ Շենքերի այս առաջին խումբը կառուցվել է հավանաբար VII դարում և կոչվել ս. Սիոն։*

*Երկրորդ հերթին շինված պետք է լինի ամենահարավային գմբեթավոր եկեղեցին, հավանաբար X դարում։ Վերջինիս հյուսիսային պատն իր սրեհլյան ծայրով միանալով երեք կից մատուռների պատին, նրանց առաջ ստացվում է բաց տարածություն, երեք կողմից եղերված շինություններով։ Այդ անպատշաճությունը վերացնելու նպատակով նախորդ շենքերին կցել են որմնամույթեր և միայն արևմտյան նոր պատ շինելով՝ երեք մատուռների առաջ եղած բաց տարածությունը վերածել են քառակուսի հատակագծով գավթի։ Հավանական ենք համարում, որ այդ գավիթ-եկեղեցին կոչվել է ս. Կարապետ իսկ գմբեթավորը՝ ս. Աստվածածին։*

*Այն, որ մեր նկարագրած հերթականությամբ են շինվել այս երեք շենքերը, ապացուցվում են նախ ս. Կարապետի երկու՝ հարավային և հյուսիսային, անկախ սյուներ չունենալով, ապա նրանով, որ գմբեթավոր եկեղեցու պատին կցված որմնամույթերից կազմվող կամարաձև խորշի մեջ գրված Ստ. Օրբելյանի արձանագրությունը (№ 563) համարեցված է*